

ՇԱՀ ԱՐԱՍ ՍԵՄԻ “ՇՆՈՐՀԱԾ,, ԿՐՕՆԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ՓԷՐԻՈՑ՝ ՀԱՅԵՐԻՆ

(ըստ 1638 Թւականի մի պատմական վաւերագրի)

ԱԵՐՁԻՆ ժամանակներս Զուգայեցի Սարգիս Խան Մ. Սարգսեանի հնութեանց ժողովածուն դիտելիս, հանդիպեցի նաև մի զբչագիր Աւետարանի, զրւած 1638 Թւին, որի յիշատակարանը պատմական կարևորութիւնից զուրկ չլինելով, Սարգիս Խանի սիրալիբ թոյլտուութեամբ ընդօրինակեցի և նոյնութեամբ տալիս եմ «ԲԱՋՊԱՎԷՊ»-ի ընթերցողներին:

Յիշատակարան.

«Փառք... որ ետ կարողութիւն տկար և նուաստ և անպիտան մարմնոյս հասանել աւարտ յայտ աւետարանիս ձեռամբ նուաստ և սուտանուն և մեղաւմած Գասպար իրիցիս և վարպետի իմո Մեսոպ զպրի ի վայելուծն Տէր Աւագին ի յերկիրն Շաւշ որ կոչի Ասպահան ընդ հովանեաւ Աստուածածնի և հայրապետութեան մերոյ Խաչատուր վրդի ի Թագաւորութեան Շահ Արասի որ բազում չարիս հասոյց ի վերայ հայկազանց ազգիս, մանաւանդ ի վերայ Փարիւլ, Բաւոյ նախանձն սատանայ որ և թափեալ զթիւնքն իւր ի սիրտ Շահապասին և գազանացեալ ի վերայ հայկազանց ազգիս որ և նեղութեամբ և բռնութեամբ և սաստիկ ահիւ և տանջանաւ որ եհատ վճիռ ի վերայ Փարիւլ քրիստոնէից և առաջ ինքն բռնութեամբ զմի գեաւղն տաշկացոյց և ապա հանեալ զգորս իւր և սպիւնաց ի վերայ գեղարէլայցն և նոցա ելեալ բռնութեամբ և նեղութեամբ որ նոր ի յաջն նոցա երևեալ թէ ծեր թէ տղայ թէ կին թէ աղջիկ և կալեալ տաճկացոցին զամենեանս և ոմանք փախստական եղեալ ի լիւրն և ի ծերպս լերանց աղիողորմ

լային և ասէին Տէր Աստուած ջնջեալ զկենդանութիւնս մեր որ ազատիմք ի յայս դառն ժամանակացս և տանջանացս, այսպէս լային և ողբային և հառաջէին և շուտ զային ի լիւրն և ի բլուրս. եթէ կամիս գիտել թէ որքան գեաւղէ էր իս աւելի ի Թուին ՌՂՈ-ին եղեալ և Բաժն աշնպէս կացեալ և յետ Բաժնացն բարեւրարն և ողորմածն և մարդասէրն Աստուած ողորմեցաւ իւր ըստեղծած ծառայիցն և իջոյց զբարկութիւն Թագաւորին և էր մին Խան որ էր անունն Խոսրով, որ և գնացեալ առ Թագաւորն վասն քրիստոնէիցն աղաչեաց և Թագաւորն հրամայեաց և ասաց եթէ Բիթլիմայն տայցեն, երթայցեն պահեստն գիրեանց քրիստոնէութիւնն յայտնապէս, և եկեալ ետուր հայոց յաւետիւ և հայը ուրախացեալ ետուն նմայ ԲՃ Թուման վասն յաւետեացն որ ետուր նոցա և այս ամենայն բոլս որ է ԻֆՃ Թուման ետուն և ազատեցան. Նոյնպէս և ազատեաց Տէր Աստուած ի դժոխոց դառն տանջանաց յերեւելի և յաներևոյթ Թշնամոյն ստացող սուրբ Աւետարանիս զՏէր Աւագն որ երես զրեւ զայս զարդարած ոսկով և լազվարդով բուրաստանս յիշատակ իւրն և իւր ծնօղացն հայրն Խաւշուռն և մայրն Եթարն և զիւր պապն Զաւրհապն և զմեծ պապն Շահողլին և զամենայն արեան մերձաւ Գարձեալ յիւրեցէ... զծաղկաւ և զկազմաւ զանարժան Միսրոպ զպիրս և զուսուցանալ զարպետն իմ զՏէր Սարգիսն և միւս Խիւ

1. Փէրիան Ապահանի հայաշատ գաւառներէ մէկն է, մօտ 24 ոստական մզոն Ն. Զուգայեցի դէպի հիւսիս-արեւմուտք.

զանեցի Մարտիրոս վարպետն ևս առաւել զմարմաւոր ծնաւդն զՏէր Մարտիրոսն և զԲանդաբն յիշեցէր, և զրեցաւ և աւարտեցաւ սուրբ աւետարանս թվին ՌՀԼ-ին »:

Անշուշտ, վերոյիշեալ նկարագրութիւնը ամենաթոյլ մի ճիշդ է այն ահաւոր բրու-նութիւնների հանդէպ, որոնց սրտառուչ նկարագրութիւնը տւել է Ա. Դաւրիթի պատմագիրը. ընդ ամենը 25 տարի ֆէրիոյ գիւղերում հաստատւած մերկ և բոկոտն հայ զաղթականութիւնը ենթարկւած է բռնաւորի կրօնական հալածանքներին և սովալլուէ հայութիւնը իւր խղճի ազատու-թիւնը ձեռք է բերում 2200 թուման տուգանքի վճարումով. թէ ինչ ահռելի զոմար էր այդ 300 տարի առաջ՝ դրամի սակաւութեան այն զարում՝ կարելի է պատ-կերացնել հետեւեալ հաշիւից. 2200 թու-մանը հաւասար է 22,000 զոանի, իսկ մէկ զոանը՝ 1,000 դինարի. այն ժամա-նակ մէկ լիտր՝ հացը արժէր մօտ 4-6 դինար, իսկ այժմ 2 և կէս զոան (կամ 2500 դինար). այն ժամանակ 15-20 թումանով կարելի էր գնել կամ պա-տրաստել մի ընդարձակ բնակարան Ն. Ջուղայում, իսկ այժմ միջակ մեծութեամբ մի բնակարան հազիւ կարելի է գնել 2-3 հազար թումանով: Այս համեմատութիւնից պարզ է, թէ ֆէրիացոց վճարած 2,200 թումանը ինչ խոշոր զոմար է եղել. իսկ թէ ինչպիսի զոմարութեամբ է գանձել յիշեալ զոմարը՝ թող երևակայութիւնը պատկերացնէ:

Շահ Աբասի շնորհած կրօնի ազատու-թիւնը՝ համաձայն վերոյիշեալ յիշատա-կարանի՝ ահա այդ ձևով է եղել, և դա ո՛չ թէ մէկ անգամ, այլ բազմաթիւ ան-գամներ, ո՛չ միայն Շահ Աբասի օրով, այլ և յետնորդ Շահերի օրով. կրօնը վա-ճառքի ապրանք էր և Պարսից Թագաւոր-ների համար եկամուտի անսպառ աղբիւր:

Ջուղա-Սպահան,

Ս. ՄԵԼԻՔ-ՅԱՎՈՐԵԱՆ

2. Մէկ և՛որը հաւասար է մօտ 16 ոտական զըր-վանքայի:

ՔՆՆԱՎԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան աւթիւ)

(Շար. տես Բազմ. 1926 էջ 866)

Ուշի ուշով դիտելով Եզնիկի երկը, « Եղծ ազանդոց »-ի բնագիրը, իր ներկայ կացութեամբ, զայլս ենք այն եզրակա-ցութեան, որ նա յերկարուած է երկու տեսակ նիւթից, հիմնական և թարմատար: Մէկը՝ նրա դրական շէնքի քարերն են, միւսը՝ շաղաղ, նրանք տարբեր են ծագու-մով և արժէքով:

Արջ նրանց իրար մօտ բերել և ջարել կանոնաւոր գծերով նուրբ խմբազրական գործ է, մի տեսակ վերագրութիւն այն մտքով, ինչ որ ասացինք յառաջարանի նկատմամբ: Հիմնական անուանածս մասն-ը, անկասկած, թարգմանածոյ են. և ոչ միայն զնոստիկների յանդիմանութիւնը, որ Մեթոդի հայացումն է, այլ և Մարկիոնի, ինչպէս և զրուանականութեան և յոյն փիլիսոփաների հայեացքների:

Թարմատար հատուածներն ևս, թուով է, զբաւոր աղբիւրներից են քաղած. գտնէ հայ ժողովրդական մտաշխարհին վերաբե-րեալ նիւթերը, անպայման, առնուած են մի զբաւոր յիշատակարանից որ հասել է մեզ:

Քնականօրէն ծագում է մի օրհասական հարց. արդեօք միևնոյն անձն է, որ հայե-ւրէնի է վերածել օտար աղբիւրները և յետոյ նրանց աւելացրել այն՝ ինչ որ գտել է պատրաստի ընթացիկ հայ զրականու-թեան մէջ, թարգմանածոյ թէ ինքնուրոյն, և այսպիսով շաղկապել մի ամբողջական երկ. թէ այլ ոք է, որ թարգմանել է օտարը և այլ՝ որ խմբագրել է, խառնելով օտարը և հայ նիւթերը՝:

1. Հայ նիւթի առիւով լինք ուղում հասկանալ այն-պիսի մանրուց, ինչպէս « Բարաթանիք » մեկնութիւնը. որ խմբագրի անմական կարծիքը կարող էր լինել, նմուշ ժողովրդական կոյուած սուղաբանութեան. խորամանի բերե թէ Արեւի մականուն է « Կառ յարեւ զարեգակ. նառնելէն արկանելոյ, ուստի և գանունն իւր խորա-